

Հազարավոր տարիներ են անցել այս ժամանակներից, երբ մարդու սկսեց մշակել հողը և «Ընտելացրեց» մինչ այդ վայրի ցորենն ու գարին, եղիտացորենն ու կարտոֆիլը: Սերնդից-սերունդ էր անցում լավագուն բուսերի ընտրությունը և, զարմանալի չէ, որ այսօրվա գյուղատնտեսական բուսերը բերատվությամբ մի քանի անգամ գերազանցում են իրենց վայրենի նախնիներին ու ազգակիցներին:

Բայց արդյո՞ք կարողացել է մարդու վայրի ֆլորայից վերցնել այն ամենը, ինչ օգտագույն է:

— Ինձրկե, ո՞չ — պատասխանում է կենսաբանական գիտությունների թեկնածու Սիգիլմունը Սենյոնվիչ Խարկսիջը, — ուշադիր դիտելու դեպքում վայրի բուսերի մեջ կարելի է գտնել նույնիսկ այնպիսիները, որ այժմ արդեն բերատվությամբ և շատ այլ հատկանիշներով չեն պիզի մարդու կողմից յուրացված կուտուրաներին:

— Վայրի բուսերով առանձնապես հարուստ է Կովկասը, — շարունակում է նա, — Կովկասի տարածությունը կազմում է ամբող Սովորական Միության միայն 1/60 մասը: Մինչեւ, այնտեղ «ապրում է» երկրի բոլոր ծաղկավոր բուսերի մեջ երրորդից ավելին: Եվ նրանց մեջ, իրենց ներքին, մեկ երրորդից ավելին տնդականներն են (տեղաճարակները), որպիսից առում են միայն Կովկասում: Այդպիսի առատությունը բացատրվում է շատ բարձրատեսակ բնակլիմայական պայմաններով: Կովկասը լեռնային երկիր է: Եվ լեռնան ստորոտից մինչև զագարը կլիման շատ է փոփոխվում:

Հենց Կովկասից էլ մենք բերեցինք մեր հրաշայի վայրենուն:

Հրաշայի: Խոկապես, դժվար թե գտնվի ավելի համապատասխան մակրից մի խոտի նամար, որը տարեկան, երկու քաղի ընթացքում, հետարից տալիս է 1000—1200 ցենտուներ կամաց մասսա: Այս խոտը

ԱՏՐԱԴԻՎԱՐԻՈՒՄ Է ԻՐ

Երածշառության ասպարեզում հին վարպետների գաղտնիքը լեզենդի ուժ ունի, որին պիտի որ հավատալ: Նախնիների անփոխարինելի փորձը, դաւեր շարունակ հավատարմութեն պահպանվող կառուցողական ձևերը և միշտ միատեսակ հյուրեր, — հին ժամանակների այս ամբողջ ալիմիան հավատք է պահանջում:

Եվ երբ դադարում ենք հավատալ դրան, երբ որևէ պրավող միայն անդրադառնում է այդ բոլորին, ապա տեղի է ունենում նեղաշրջում: Այժմ արդեն 200 000 ֆրանկանոց ստրայֆարիուր չունի գիտականուն մշակված 1500 ֆրանկանոց չուրակի արձենքը: Խորհրդավորության սիրահարն այս դեպքում կորցնելու բան ունի, իսկ երածշառություն՝ ամենին:

Առայժմ աշխարհում գոյություն ունի գիտականուն կառուցված միայն մի չուրակ. դա կիեմի համալսարանի պրոֆեսոր Դամոսի չուրակն է: Ասացինք՝ պրոֆեսոր, ճշում ենք՝ ոչ թե երածշառության, այլ էլեկտրոնիկայի պրոֆեսոր: Նա իր չուրակը ներկայացրել է լավագույն մասնագետների, աշխարհի բազմարիկ կոնսուլտատունների: Քուրի միաձայն եղակացությունն է չուրակը հիանալի է: Մարդիկ այս գնահատականը տալիս են չուրակի ձայնին: Շեշտում ենք ձայնին, որովհետև չուրակն ուշադիր դիտելու դեպքում համոզվում ենք, որ նա շինված է հասարակ տախտակից և վրան խված է այն լամփից, որով մեկուսացման համար ծածկում են էլեկտրամուտունները: Ստրայֆարիուսի լամփը, փայտի հազվագյուտ տեսակները մի կողմ են բողնված: Սա լեզենդի վախճանն է:

ԿՈՐՅՆՈՒՄ ԳԱՂՏՆԻՔԸ

ԿԱՏՍՈՐԵԼՈԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե պրոֆեսոր Դաենոս զբաղվեց հատկապես ջուրակի պրոբլեմով, ապա պատճառն այն էր, որ նա սիրում էր դաշնամուրի և ջուրակի սոնատներ ու տարված էր դրանց ստերեո-արձանագրման մոլորյամբ: Դաենոսը զիտեր, թե ինչպես պետք է տեղափորել միկրոֆոնը դաշնամուրի նվազն արձանագրելու համար: Բայց ջուրակի մասին ոչինչ չզիտեր: Նա չզիտեր, թե ինչպես պետք է կատարել ձայնընկալումը, եթեու գործիքների հնչյունային հավասարակշռությունն ստանալու համար: Նա զնաց Փարիզ, ներկայացավ ձայնագրման մի ստուդիա, որտեղ նրան ասացին.

— Ջուրակի ձայնը դուրս է զալիս երկու անցերից (էֆեր): Միկրոֆոնը դրեմ դրանց վերևում:

Ահեծ վերադառնալուց հետո պրոֆեսորը հարտուղարումուն առաջարկեց իր նվազի ժամանակ փակել ջուրակի անցերը: Քարտուղարումին երկու ձեռքը դրեց երածշտական գործիքի վրա. գրեթե ոչ մի ձայն չէր լսվում: Պրոֆեսոր Դաենոսի գլխում միտք հղացավ անցերը ծածկել սոսնարդով (սպարագրապով): Զայնը դուրս էր զալիս նորմալ ձևով: Եվ իրոք, եթե անցերի վրա դրված ձեռքերը բռնչ չէին տալիս, որ փայտը տատանվի, ապա սոսնարդովն այնքան բարակ էր ու նկու, որ տատանվում էր փայտի հետ միասին: Դաենոսի ջուրակը ծնվել էր:

Պրոֆեսորն իր լարուատորիայի մի մասը վերածեց առաջնազործական արհեստանոցի և զինվեց մկրատով ու սղոցով: Խկսելով ջուրակի վզիկից՝ լաւերից և սիգարի սովորական տուփից (զու-

կենդանիների սիրած ուտելիքն է և իր սննդարարությամբ չի պիզում ընդավոր կոլտուրաներին. չոր խոտի մեջ պարունակվում է մինչև 24 տոկոս յուրացվող սպիտակուց: Այն լավ սիլոսացվում է նույնիսկ եղիստացորենի չոր ցողունների խառնուրդում: Դրա հետ մեկտեղ խոտը տալիս է սերմի բարձր (նեկտարից մինչև 30—40 ցենտներ) բերք: Սերմն իր մեջ պարունակում է մինչև 50% յուղ: Այն լավ համ ունի և կարելի է օգտագործել սննդի մեջ:

Այդ բույսը սրտատերեւ կատրանն է, որը պատկանում է խաչածաղկավորների ընտանիքին. այդ ընտանիքին են պատկանում, օրինակ, կաղամթը, բողլը: Վայրի կատրանը աճում է Հրուշակին Կովկասի չոր տափաստաններում և կիսաանապատներում: Այս բազմամյա խոտի հորը տերևների տրամագիծը երթևմ հասնում է մեկ մետրի, իսկ ցողունի բարձրությունը՝ (ծաղկման շրջանում) 2 մետրի: Խոտի հորը առանցքային արմատը խորանում է հողում մինչև 3 մետր, և արտեպան հորատանցքի նման ենթառողային խոր շերտերից դուրս է բաշում ջուրը: Արմատի կառուցվածքի այս առանձնահատկության մեջ էլ հնաց քարնված է բույսի զարմանակի երաշտադիմացկուրության գաղտնիքը:

«Վայրենու» կոլտուրականացնելու մեծ աշխատանքը Ս. Ս. Խարկիսը տանում է գլուղատնեսական գիտությունների թեկնածու Լ. Ֆ. Նելքրասովայի և ավագ գիտաշխատող Պ. Ֆ. Տարանի հետ: 1949 թվականից նելքար Ցերկով քաղաքի մերձակարում գտնվող կայսի փորձադաշտի ամենամեծ հողամատերից մեկը վրայեցված է կատրանով: Այդ ժամանակից անցել է արդեն տասնչորս տարի, և այդ բույսը վերացանելու կարիքը չի զգացվել: Շէ որ այն բազմամյա է: Խոկ նոր հողամատերում ցանքը կատրանով է աշնանը: Հաջորդ տարում արդեն նեկտարից կարելի է ստանալ մինչև 400 ցենտներ

կանաչ մասսա: Երկրորդ տարում բռվսը սկսում է ծաղկել և աճել ամբողջ ուժով: Այս կարող է բավանալ ոչ միայն սերմերով, այլև արմատի մի քանի սակախմետրանոց կտրոններով:

Կատրանն «ընտեղացնող» էստոպիաստները գտնում են, որ այն կարելի է օգտագործել չոր լանջերը և ցանքաշրջանառության մեջ չօգտագործվում այլ էռովիոն-վուանգավոր հողերն ամրապնդելու համար:

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՓՈքՐ ՄԱՐԴԻԿ

Մինչև անցյալ դարի վերջը նըրանց մասին գրեթե ոչինչ հայտնի չէ: Չատերը հակված էին այն կարծիքին, թե նրանք ալլասերված նեգրական ցեղեր են: Միաև վերջին տարիների հետազոտություններն ապացուցեցին, որ պիզմենթերն առանձնահատուկ ցեղ են և տարբերվում են Աֆրիկայի այլ՝ սևամորթ բնակիչներից: Հարավ-արևելյան Ասիայում նույսպես բնակվում է նման գաճաճ ցեղ, և միայն մի քանի մեկուսացված և միահանաված ցեղեր ապրում են Աֆրիկայի նախնադարյան հոտորի անտառուից ավելի հարազ և հարավ-արևելք: Սակայն պիզմել-բամբուտիներն աշխարհի գաճաճ ցեղերի մեջ ամենափոքրերն են: Զափահան պիզմելի հասակը տատանվում է 120—150 սմ-ի միջև:

Նախնադարյան հոտորի անտառում, որի տարածությունը հավասար է Չեխոսլովակիայի տերիտորիային, ապրում են 20—25 հազար բռչվոր պիզմել-որսորդներ: Այժմ արդեն հաստատված է, որ նրանք բռջորովին էլ չեն ոչնչանում, ինչպես համարում էին նախկինում: Յուրաքանչյուր պիզմելումու ընկույտ է 2—3 կենդանի և մեկ մահացած երեխա: Պիզմելները երեխաներ սիրում են, և եթե գոյու-

գանեռանիստ), նա ձեռնարկեց իր առաջին պրատումները: Անցեւեր փակելու համար պրոֆեսոր գործիքի վրա հարմատեցրել էր փայտե խրցաններ, ձեռի տակ ունենալով մի շարժական եւս ու տուփ:

Ուղղանկյուն տուփը մեծ դժվարություններ էր հարուցում աղեղը (կատնացաղեղ) սահեցնելիս: Չնայած դրան, պրոֆեսոր Դաբոսի բարեկամներից մեկը, կիեմի կոնսերվատորիայի ջուրականար Հ. Կոխը շարաբական մի քանի ժամ նվազում էր ծխախոտի այդ տուփի վրա: Նվազելը դժվար էր, բայց տուփը բռյուլ էր տալիս հաշվել տատանումների հանախականություններ: Դրա շնորհիվ հնարավոր էր նախատեսել այն ամենը, ինչ տեղի էր ունենում ջուրակի ներսում և ստուգել փորձնական նախապարհով, որովհետեւ Դաբոսի ջուրակի հիմքը հաշվին է և փորձարկումը: Դա տեսեց եւկու տարի:

Մի քանի դար առաջ, երբ Ստրադիվարիուսը զբաղվեց ջուրակի պրոբլեմով և բազմարիկ խարխափումներից հետո կարողացավ պատրաստել մի գործիք, որի բացառիկ բարեհնչուն ձայնից ողջ աշխարհը սփառնացած մնաց: Յուրաքանչյուր փորձում էր հասկանալ այդ ջուրակի արժանիքները: Ոմանք կարծում էին, թե Ստրադիվարիուսը տիրապետում է «ներկի կախարդանքին», մյուսները ենքաղրում էին, թե գոյուրյուն ունի կառուցման մի գաղտնի բանաձև:

Երես Ստրադիվարիուսի ժամանակակիցները երա ջուրակը շշապատում էին խորեղավորությամբ, ապա Ստրադիվարիուսի համար ջուրակը առօյա իրականություն էր: Եր ժամանակին նա կարող էր համարվել ակուստիկայի վարպետ: Ուռնելով գուգակցումը օդի տատանումների և ջուրակի վերեկ երեսի միջև՝ մի քանի միլիմետրի մասավարությամբ նա գտել էր ջուրակի նշգրիտ մեծությունը: Նա այդ շափերը գտել էր մեծ աշխատանքով, և պետք է ասել՝ նաև բազմարիկ ձախողված ջուրակների գնով: Հասկանալի է, որ նա իր տրամադրության տակ չի ունեցել մեր արդի միջոցները, և երա հետեւորդները իզուր են շարունակ որոնում երա ջուրակի բանաձևը: Այդպիսի բանաձև գոյուրյուն չունի:

Դաբոսի ջուրակը նիշտ հակառակն է. նա լիո-